ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՄԵԴԻԿԱ ՍՊԸ-ն ԳՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/22 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
2	Լազերային վիրահատական համակարգ	METRUM CRYOFLEX	SWING 15	METRUM CRYOFLEX S.A	Լազերային վիրահատական համակարգ Վիրաբուժական դիոդային լազերը կարող է օգտագործվել կտրվածքի, դիսեկցիայի, գոլորշացման, աբլացիայի, տաքացման, հեմոստազի և փափուկ հյուսվածքների կոագուլյացիայի, ինչպես նաև ընտրողական անոթային ֆոտոթերմոլիզի համար՝ պրոցեդուրաների առնվազը հետևյալ ոլորտներում՝ Անոթային վիրաբուժություն Ստորին վերջույթների երակային անբավարարության բուժման

						համար՝ ներերակային լազերային եղանակով, հատկապես հետևյալ հիվանդություններով հիվանդների բուժման համար. ■ Մեծ սաֆենային երակ ■ Փոքր սաֆենային երակ ■ վտակային երակներ ■ երակային հիվանդությունների կրկնություններ ■ երակային խոցեր՝ որպես օժանդակ բուժում Նվազագույն ինվազիվ փափուկ հյուսվածքների վիրահատություն ■ կտրում (կտրվածք, հեռացում) ■ գոլորշիացում (աբլացիա) ■ կոագուլյացիա (և դրա հետևանքով առաջացող հեմոստազ) ■փափուկ հյուսվածքների վիրահատություն (ներառյալ էնդոսկոպիկ վիրահատությունը): Ստամոքս-աղիքային տրակտի վիրահատություն Պրոկտոլոգիական խանգարումների՝ մարսողական տրակտի վերջին հատվածի բուժման համար, մասնավորապես՝ ■ ուղիղ աղիքի արյունահոսող հանգույցներ (թութք) - ■ հետանցքային ֆիստուլաներ և շուրջհետանցքային սինուսներ ■ պիլոնիդալ կիստաներ Օրթոպեդիա ■ միջմաշկային (պերկուտան) լազերային

						նուկլեոտոմիա (պերկուտան լազերային սկավառակի դեկոմպրեսիա) Էսթետիկ վիրաբուժություն Տեղայնացված ավելորդ ճարպային հյուսվածքի հեռացման համար, ներառյալ՝ ■ լազերային լիպոլիզի ընթացակարգ ■ լազերային լիպոսակցիայի ընթացակարգ ■ գինեկոմաստիա Սարքը կարող է ապահովել մինչև 0.5 մմ տրամագծով արյան անոթների փակում և հեմոստազ ։ Պետք է ունենա առնվազը ստորև բերված չորս ռեժիմները. 1. Շարունակական ռեժիմ (CW) 2. Կիսաշարունակական (QCW) 3. Իմպուլսային (REPEAT) 4. Ֆլեբոլոգիա Պետք է ունենա օգտագործողի հայեցողությամբ ծրագրեր ստեղծելու և պահպանելու հնարավորություն Ավտոմատ կերպով ազդանշան է տալիս օպտիկական մանրաթելի տեղափոխման ժամանակի մասին՝ օպտիմալ կառավարման համար։Հյուսվածքների մնացորդային ածխացման բացակայություն՝ ապահովելով էներգիայի չափաբաժնի միատարր

						փոխանցում ամբողջ երակով: Լազերում օգտագործվող ալիքի կենսաֆիզիկական հատկությունն այնպիսին է, որ աբլյացիայի գոտին մակերեսային է և վերահսկվող, ուստի հարակից հյուսվածքներին վնասելու ռիսկ չկա: Լազերը կառավարվում է բարձր թույլտվությամբ սենսորային էկրանով (touch screen)՝ գերազանց գունային որակով և լայն տեսադաշտով, որպեսզի օպերատորը հեշտությամբ օգտագործի այն: Սարքի վրա կարող են պահպանվել անհատական օգտագործողի կարգավորումները, ինչը թույլ է տալիս արագ և հեշտ ընտրել բուժման պարամետրերը: Ծրագրակազմը թույլ է տալիս օգտագործողին ընտրել էներգիայի ճառագայթումը անընդհատ ալիքային (CW) ռեժիմով, որտեղ օպերատորը, հիմնվելով ուլտրաձայնային պատկերի վրա, հետ է քաշում օպտիկական մանրաթելը՝ ի պատասխան երակի տեսանելի արձագանքի էներգիայի ճառագայթմանը: Սարքի ծրագիրը ներառում է աշխատանքի ռեժիմ,

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО МЕДИКА в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԳՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/22 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
2					որը հնարավորություն է տալիս կառավարել երակի աբլացիայի գործընթացը՝ լսելի կերպով տեղեկացնելով օպերատորին երակին ծրագրավորված (կամ նախապես սահմանված) էներգիայի չափաբաժնի (Ջ/սմ) մատակարարման մասին, այդպիսով որոշելով մշակված հյուսվածքից օպտիկական մանրաթելի հետ քաշման արագությունը (վրկ/սմ): Ցանկալի էներգիայի չափաբաժինը ստանալուց հետո լազերը ավտոմատ կերպով ազդանշան է տալիս օպտիկական մանրաթելի տեղափոխման ժամանակի մասին: Բարձր թույլտվությամբ սենսորային էկրանի (touch screen) անկյունագիծը՝ առնվազը 7 դյույմ: Էկրանը պետք է թույլ տա կարգավորել առնվազը հետևյալ պարամետրերը. 1. Պայծառություն 2. Լեզու 3. Գրաֆիկական ինտերֆեյս 4. Ձայն՝ բարձր կամ ցածր 5. Ձայնի տեսակ՝ շարունակական կամ պարբերական 6. Ձայնային ազդանշանի հաճախություն՝ առնվազը 0.5-4 Հց միջակայքով 7. Դիրքավորման

						ճառագայթի ինտենսիվություն՝ առնվազը 1-5 սանդղակի միջակայքով կարգավորվող Լազերային ճառագայթման ժամանակ ցուցադրվում են հետևյալ արժեքները՝ էներգիա, ճառագայթման ժամանակ, պրոցեդուրայի ժամանակ, ելքային հզորություն և ճառագայթման առավելագույն ժամանակ: Թվով առնվազը երկու USB ելքերի առկայություն: Սարքը պետք է լինի նոր, չօգտագործված: Պետք է ներառի լիարժեք աշխատանքի համար նախատեսված բոլոր պարագաները, այդ թվում՝ 1. Ռադիալ մանրաթել 600մկմ - 360° օղանձև ճառագայթմամբ, կրկնակի մանրէազերծ փաթեթավորմամբ՝ EN ISO 10993-1 ստանդարտին համապատասխան, մեկանգամյա օգտագործման: Մանրաթելի ծայրը կոնաձև՝ սիլիցիումային մազանոթային գմբեթով, գծանշումներ յուրաքանչյուր սմ-ի վրա, հատուկ գծանշում յուրաքանչյուր 5 սմ-ի վրա: Մանրաթելի երկարությունը առնվազը 250 սմ - 2 հատ: 2. Ուղիղ

						ճառագայթմամբ մանրաթել 600մկմ – բազմակի օգտագործման – 1 հատ 3. Ինտրադյուսերի լրակազմ 6Fr. 11սմ, Չիբա ասեղ 18G 20 սմ երկարությամբ– 2 հատ 4. Թումեսցենտային պոմպ, դիսպենսեր՝ լայնացած երակների լազերային բուժման համար – 1 հատ: Այն իրենից ներկայացնում է հատուկ նախագծված թումեսցենտային ներթափանցման պոմպ, որը մատակարարում է թումեսցենտային հեղուկի մեծ ծավալ՝ օպտիմալ ճնշմամբ և ճշգրիտ կարգավորվող ներթափանցման արդյունավետությամբ: Մինչև 27 լ/ժամ թումեսցենտային հեղուկի մատակարարման հնարավորություն: 5. Ոտնակի անջատիչ – 1 հատ 6. Պաշտպանիչ ակնոց 1470 նմ ալիքի երկարության համար - 1 հատ: Այն պետք է ունենա 1470 նմ ճառագայթումից արդյունավետ պաշտպանություն ապահովող մարում և համապատասխանի 60825-8 ստանդարտի՝ պաշտպանիչ ակնոցի համար նախատեսված CE

						պահանջներին: 7. SMA-905 լազերային մոդուլի կափարիչ - 1 հատ 8. Արգելափակման կողպեք (խրոցակ) - 1 հատ 9. Սնուցման մալուխ՝ առնվազը 3մ երկարությամբ - 1 հատ 10. Պահեստային հոսանքի ապահովիչներ - 2 հատ 11. Փոխադրման արկղ - 1 հատ 12. Մանրաթելի բռնիչ - 1 հատ 13. Շահագործման ձեռնարկ - 1 հատ Առավելուգույն ծախսվող հզորությունը՝ ոչ ավել 370ՎԱ Ալիքի երկարությունը – 1470նմ Լազերի առավելագույն հզորությունը – առնվազը 15Վտ Չափերը՝ ոչ ավել 44x47x21սմ Քաշը՝ ոչ ավել 14կգ Լազերային իմպուլսի ժամանակը՝ առնվազը 200մկվ - 100 վ միջակայքով Փաթեթում իմպուլսների քանակը՝ առնվազը 1 – 100 միջակայքով Իմպուլսների փաթեթների միջև միջակայքը՝ առնվազը 200մկվ - 100 վ Դիրքավորման ճառագայթի հզորությունը՝ ոչ ավել 5մՎտ Դիրքավորման ճառագայթի ալիքի երկարությունը՝ 635նմ Դիրքավորման ճառագայթի պայծառությունը՝ կարգավորվող

					Օպտիկամանրաթելի միակցիչը՝ ստանդարտ SMA 905 տիպի Մանրաթելի ճիշտ/սխալ միացման կարգավիճակի վերաբերյալ էկրանի վրա համապատասխան ազդանշանի առկայություն Էլեկտրական անվտանգության դաս՝ առնվազն դաս I Լազերային անվտանգության դաս՝ առնվազը 4 Բժշկական սարքի դաս՝ IIb Երաշխիքը առնվազը 12 ամիս Որակի միջազգային վկայականներ 1. ISO 13485 2. CE 93/42/EEC դիրեկտիվով